

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ  
«ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ»  
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ԱԶԳԱՅԻՆ ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՂ  
ԵՎ ՆՈՐՈԳՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՈՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ  
ԵՎ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ**



### III. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Առեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների								
		Քննութ.	Ստուգարք	Կուրս աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն				1-ին կուրս		2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս		
					Ընդամենը	Այդ թվում			1-ին կիս	2-րդ կիս	3-րդ կիս.	4-րդ կիս.	5-րդ կիս.	6-րդ կիս.	7-րդ կիս.	8-րդ կիս	
						Տեսակ. ուսուց.	Լաբոր. և գործն. աշխ	Սեմինար պարապմունք	Անհատ. պարապմունք	2աբ 17	2աբ 19	2աբ 6	2աբ. 11	2աբ. 6	2աբ.	2աբ.	2աբ .
<b>1.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ</b>																
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ	2	1		72	54	18		36	36							
1.2	Տնտեսագիտության հիմունքներ		2		54	44	6	4		54							
1.3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հմնք.		2		54	48		6		54							
1.4	Իրավունքի հիմունքներ		1		36	30	6		36								
1.5	Պատմություն		2		54	48		6		54							
1.6	Ռուսաց լեզու		1,2		72	12	60		36	36							
1.7	Օտար լեզու		1,2		72	16	56		36	36							
1.8	Ֆիզիկական կուլտուրա		1-5		118	10	108		34	38	12	22	12				
1.9	Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի և հմնք.		1		36	22	14		36								
1.10	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		4		18	14	4					18					
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>586</b>	<b>298</b>	<b>272</b>	<b>16</b>	<b>214</b>	<b>310</b>	<b>12</b>	<b>40</b>	<b>12</b>				
<b>2.</b>	<b>ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>																
2.1	Համակարգչային օպերատորություն		1		72	20	52		72								
2.2	Աշխատանքի պաշտպանություն և տեխնիկական անվտանգության կանոններ		1,2		72	54	18		36	36							

2.3	Հաղորդակցության հմտություններ		2		54	18	36				54					
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>198</b>	<b>92</b>	<b>106</b>			<b>108</b>	<b>90</b>					
<b>3.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>															
3.1	Երաժշտական գրագիտություն	2,4	1,3		108	54	54			36	18	18	36			
3.2	Արտասահմանյան երաժշտական գործիքների զարգացման պատմությունն ու կառուցվածքը	2,4	1,3		90	54	36			18	18	18	36			
3.3	Հայ ժողովրդ. ստեղծագործություն		3,4		72	54	18					36	36			
3.4	Հայ երաժշտության պատմություն	5			36	24	12							36		
3.5	Ազգային նվագարաններ	1,2			72	12	60			36	36					
3.6	Ընդհանուր գործիքային կատարողականություն	3,5	1,2,4		108				108	18	18	18	18	36		
3.7	Գծագրական տարրերի պատկերում		1		36	6	30			36						
3.8	Ծառերի և փայտանյութի հիմնական հատկություններ		1		36	18	18			36						
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>558</b>	<b>222</b>	<b>228</b>		<b>108</b>	<b>180</b>	<b>90</b>	<b>90</b>	<b>126</b>	<b>72</b>		
<b>4.</b>	<b>ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>															
4.1	Ձեռքի գործիքներով աշխատանք		1,2,3		108	18	90			54	36	18				
4.2	Հյուսնային միացությունների պատրաստում և միացում		2,3,4		90	18	72				36	18	36			
4.3	Փայտամշակման հաստոցներով աշխատանք		2,3,4		90	18	72				18	18	54			
4.4	Երաժշտական գործիքների դետալների պատրաստում և նորոգում	6 պետ	3,4,5		108	18	90					36	36	36		
4.5	Երաժշտական գործիքների պատրաստում	6 պետ	3,4,5		108	18	90					18	36	54		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>504</b>	<b>90</b>	<b>414</b>	<b>16</b>	<b>108</b>	<b>54</b>	<b>90</b>	<b>108</b>	<b>162</b>	<b>90</b>		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>1846</b>	<b>8702</b>	<b>1020</b>			<b>556</b>	<b>578</b>	<b>210</b>	<b>328</b>	<b>174</b>		
5.	<b>ԸՆՏՐՈՎԻ</b>				180					36	90		36	18		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>180</b>											
6.	<b>ՊԱՀՈՒՍԱՍՅՈՒՆ ԺԱՄԵՐ</b>				98				98	20	16	6	32	24		
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>98</b>											
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>2124</b>					<b>612</b>	<b>684</b>	<b>216</b>	<b>396</b>	<b>216</b>		
7.	<b>ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>				250											
	Շաբաթվա ժամերի քանակը									50	50	50	50	50		

	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>2374</b>												

	<b>IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ</b>			N	<b>VII. ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ</b>
1	Կոմպոզիցիա				<b>ԿԱԲԻՆԵՏՆԵՐ</b>
2				1	լեզուների
3				2	պատմության
4				3	երաժշտական առարկաների
				4	հումանիտար առարկաների
	<b>V. ՊՐԱԿՏԻԿԱ</b>	Կիսամյակ	Շաբաթ	5	համակարգչային
1	Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ	III, IV, V	30	6	գրադարան
2	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	II, IV	6	7	ծայնադարան
3	Նախաավարտական, արտադրական պրակտիկա	VI	3	8	տեսադարան
4					<b>ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ</b>
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>39</b>	1	
	<b>VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ</b>			2	<b>ԱՐՇԵՍԱՆՈՑՆԵՐ</b>
				1	ատաղձագործական
				2	երաժշտական գործիքների պատրաստման:
					<b>ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ</b>
				1	մարզադահլիճ
				2	մարզահրապարակ

Ամփոփիչ ատեստավորում՝ քննություն  
ա) ,երաժշտական գործիքների դետայների պատրաստում և նորոգումե - 16,02 – 22,02  
բ) ,երաժշտական գործիքների պատրաստումե 23,02 – 01,03

## VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, հաստատության ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների /մոդուլների/ ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի /մոդուլի/ համար սահմանված ժամերի հաշվին: Ըստ առարկաների /մոդուլների/ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը: Քննությունների և ստուգարքների անցկացման կարգը սահմանում է ՀՀ կրթության և գիտության նախարարությունը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի, ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների /մոդուլների/ գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական խումբը բյուջետային ֆինանսավորման դեպքում կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի /մոդուլի/ յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների /մոդուլների/ տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով: Ուսումնամեթոդական խորհրդի որոշումներն ու երաշխավորությունները ուսումնական տարվա սկզբում քննարկում է քոլեջի խորհուրդը, հաստատում՝ տնօրենը:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով՝ մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը: Ամանորի և Սուրբ ծննդի տոների շաբաթը քոլեջը հաշվի է առնում յուրաքանչյուր տարվա աշխատանքային ժամանակացույցը կազմելիս:
6. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
7. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
8. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
9. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ գնահատումով:
10. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
11. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

# ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»

**Մոդուլի դասիչը՝** ԱՀ ՀՕ - 5 - 13 - 001

**Մոդուլի նպատակը՝** Ուսանողի մոտ ձևավորել համակարգչային տեխնիկայից օգտվելու կարողություններ, աշխատանքային գործունեության ընթացքում դրա ծրագրային հնարավորությունները տեքստային և թվաաղյուսակային փաստաթղթերի պատրաստման, խմբագրման, դրանց ֆորմատավորման ու ձևավորման, գծագրական կառուցումների կատարման, ինչպես նաև փաստաթղթերի պահպանման ու տպագրման ընթացքում կիրառելու և համացանցում աշխատելու տարրական հմտություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 72 ժամ

Տեսական պարապմունք՝ 20 ժամ

Գործնական աշխատանք՝ 52 ժամ

**Մուտքային պահանջները՝** Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

- 1) Ներկայացնի Microsoft Word ծրագիրը (հիմնական տեղեկություններ)
- 2) Իրականացնի տեքստերի տարրական ֆորմատավորում, փաստաթղթի պահպանում
- 3) Ներկայացնի Microsoft Excel ծրագիրը (հիմնական տեղեկություններ)
- 4) Պատրաստի և խմբագրի աղյուսակներ, ձևավորի և խմբագրի գրաֆիկներ, տպագրի փաստաթուղթ
- 5) Կարողանա աշխատել Համացանցում (հնտերնետում)

**Ուսումնառության արդյունք 1.** Ներկայացնել Microsoft Word ծրագիրը (հիմնական տեղեկություններ)

**Կատարման չափանիշներ**

- 1) ճիշտ է ներկայացնում Microsoft Word ծրագրի պատուհանի կառուցվածքը,
- 2) կարողանում է բացել նոր փաստաթուղթ,
- 3) կարողանում է փակել փաստաթուղթը,
- 4) կարողանում է ընտրել թղթի չափերը, ընտրել էջի ուղղաձիգ կամ հորիզոնական դիրքերը,
- 5) կարողանում է կիրառել Zoom գործիքը,
- 6) կարողանում է պատրաստել Word ծրագիրը հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար,
- 7) կարողանում է ստեղծաշարի օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ:

## **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր համակարգչի հիմնական և լրացուցիչ բաղադրիչների, օժանդակ տեխնիկական սարքերի, օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքի, կիրառվող հիմնական ծրագրերի, հրամանների, փաստաթղթի տպագրման վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:

## **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է համակարգչային լսարանում, դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, անհատական հանձնարարություններով և ինտերակտիվ մեթոդներով: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, կիրառվում են համապատասխան համակարգչային ծրագրեր:

## **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 4 ժամ

Գործնական աշխատանք 10 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.** Տեքստերի տարրական ֆորմատավորում, փաստաթղթի պահպանում

## **Կատարման չափանիշներ**

- 1) կարողանում է նշել բառերը և տեքստային հատվածները,
- 2) կարողանում է կատարել ուղղումներ տեքստում,
- 3) կարողանում է կատարել տողերի հավասարեցում,
- 4) կարողանում է փոխել տեքստի գույնը,
- 5) կարողանում է փոխել տեքստի գունային ֆոնը,
- 6) կարողանում է փոխել միջտողային տարածությունները,
- 7) կարողանում է փոխել պարբերության խորությունները լուսանցքներից,
- 8) կարողանում է փոխել լուսանցքների խորությունները,
- 9) կարողանում է փատարել մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորում,
- 10) կարողանում է չեղյալ հայտարարել (հրաժարվել) ֆորմատավորման կատարված գործողությունները,
- 11) կարողանում է վերականգնել ֆորմատավորման չեղյալ հայտարարված գործողությունները, պատճենել տեքստը,
- 12) կարողանում է տեղափոխել տեքստը,



13) կարողանում է տողադարձել տեքստը,

14) կարողանում է համարակալել էջերը,

15) կարողանում է պահպանել փաստաթղթում կատարված ընթացիկ ֆորմատավորումները և փոփոխությունները,

16) կարողանում է պահպանել նոր ստեղծված փաստաթուղթը,

17) ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի դասակարգման և պահպանման տեխնոլոգիաները:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանք տեքստեր կազմելու, ֆորմատավորելու, ուղղումներ ու լրացումներ կատարելու, փաստաթուղթը պահպանելու վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է համակարգչային լսարանում, դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, անհատական հանձնարարություններով և ինտերակտիվ մեթոդներով: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, կիրառվում են համապատասխան համակարգչային ծրագրեր:

### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 5 ժամ

Գործնական աշխատանք 12 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.** Ներկայացնել Microsoft Excel ծրագիրը (հիմնական տեղեկություններ)

### **Կատարման չափանիշներ**

1) ճիշտ է ներկայացնում Microsoft Excel ծրագրի պատուհանի կառուցվածքը,

2) կարողանում է ստեղծել աշխատանքի օգնությամբ մուտքագրել տեքստ, մեծատառ նշաններ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,

3) կարողանում է ներկայացնել տվյալները աղյուսակի տեսքով,

4) կարողանում է ներկայացնել տվյալները գրաֆիկական տեսքով

5) կարողանում է կատարել առանցքների և գրաֆիկների մակագրությունը:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կառաջադրվեն հայերեն և օտար լեզուներով տեքստ մուտքագրել, ուղղումներ, ջնջումներ, լրացումներ կատարել, տեքստին կից նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ՝ ներմուծել:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է համակարգչային լսարանում, դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, անհատական հանձնարարություններով և ինտերակտիվ մեթոդներով: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, կիրառվում են համապատասխան համակարգչային ծրագրեր:

### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 4 ժամ

Գործնական աշխատանք 10 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.** Աղյուսակների պատրաստում և խմբագրում, գրաֆիկների խմբագրում և ձևավորում, փաստաթղթի տպագրում

### **Կատարման չափանիշներ**

- 1) կարողանում է պատրաստել աղյուսակ,
- 2) կարողանում է աղյուսակի մեջ մուտքագրել տեքստ,
- 3) կարողանում է կատարել ուղղումներ և լրացումներ աղյուսակիմեջ,
- 4) կարողանում է ավելացնել նոր տողեր և նոր սյունակներ աղյուսակիմեջ,
- 5) կարողանում է ջնջել աղյուսակի տողերը և սյունակերը,
- 6) կարողանում է փոխել սյունակի լայնությունը «Մկնիկի» օգնությամբ,
- 7) կարողանում է փոխել տողի բարձրությունը «Մկնիկի» օգնությամբ,
- 8) կարողանում է փոխել աղյուսակի գծերի գույնը,
- 9) կարողանում է գունավորել աղյուսակի տողը և սյունը,
- 10) կարողանում է գծագրել գրաֆիկական օբյեկտներ,
- 11) կարողանում է գծագրել գրաֆիկական օբյեկտներ՝օգտագործելով Autosshapes պատուհանի պատրաստի ձևեր,
- 12) կարողանում է գծագրել կանոնավոր պատկերներ,

- 13) կարողանում է ֆորմատավորել գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով, շրջելով, չափերը փոխելով,
- 14) կարողանում է խմբավորել գրաֆիկական օբյեկտները,
- 15) կարողանում է հավասարեցնել գրաֆիկական օբյեկտները իրար նկատմամբ,
- 16) կարողանում է գծագրել տեքստային բլոկներ,
- 17) կարողանում է գունավորել գրաֆիկական օբյեկտները,
- 18) կարողանում է երանգավորել գրաֆիկական օբյեկտները,
- 19) կարողանում է ստվերավորել գրաֆիկական օբյեկտները,
- 20) կարողանում է թերթել փաստաթուղթը նախադիտման ռեժիմում,
- 21) ճիշտ է ներկայացնում Print պատուհանի ֆունկցիաները,
- 22) կարողանում է տպագրել փաստաթուղթը:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կառաջադրվեն աղյուսակներ, գրաֆիկական օբյեկտներ, տեքստային բլոկներ գծագրել, խմբավորել, գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում, ստվերավորում կատարել:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է համակարգչային լսարանում, դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, անհատական հանձնարարություններով և ինտերակտիվ մեթոդներով: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, կիրառվում են համապատասխան համակարգչային ծրագրեր:

### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 5 ժամ

Գործնական աշխատանք 12 ժամ

**Ուսումնառության արդյունք 5.** Համացանցում (Ինտերնետում) աշխատելու իմացություն

### **Կատարման չափանիշներ**

- 1) ճիշտ է մեկնաբանում «Համացանց» (Ինտերնետ) հասկացության նշանակությունը,
- 2) ճանաչում է Internet Explorer, Google Chrome, Mozilla ծրագրերը, ճիշտ է մեկնաբանում դրանց նշանակությունը,

- 3) ճիշտ է ներկայացնում «Համացանցային (Ինտերնետային) հասցե» հասկացությունը,
- 4) ճիշտ է մեկնաբանում History հրամանի նշանակությունը,
- 5) ճիշտ է մեկնաբանում Favorites հրամանի նշանակությունը,
- 6) ճիշտ է մեկնաբանում Stop հրամանի նշանակությունը,
- 7) ճիշտ է մեկնաբանում Refresh հրամանի նշանակությունը,
- 8) ճիշտ է մեկնաբանում Back և Forward կոճակների նշանակությունը,
- 9) կարողանում է պատճենել տեքստային տեղեկատվությունը Համացանցային (Ինտերնետային) էջից,
- 10) կարողանում է պատճենել գրաֆիկական տեղեկատվությունը Համացանցային (Ինտերնետային) էջից,
- 11) ճանաչում է տեղեկատվության որոնման Համացանցային (Ինտերնետային) ծառայությունները,
- 12) կարողանում է որոնել տեղեկատվությունն ըստ չափանիշների,
- 13) ճիշտ է օգտվում տեղեկատվության որոնման Համացանցային (Ինտերնետային) ծառայություններից,
- 14) ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային փոստի նշանակությունը,
- 15) կարողանում է ուղարկել և ստանալ էլեկտրոնային նամակներ:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանք համացանցային հիմնական ծրագրերի օգտագործման, առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում փնտրելու, տեղեկությունները համացանցից ներբեռնելու, պահպանելու և օգտագործելու, էլեկտրոնային փոստից օգտվելու վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է համակարգչային լսարանում, դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, անհատական հանձնարարություններով և ինտերակտիվ մեթոդներով: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, կիրառվում են համապատասխան համակարգչային ծրագրեր:

### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 2 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

**ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ»**

**Մոդուլի դասիչը** ԱՀ – ԱՊՏԱԿ – 5 – 13 – 002

**Մոդուլի նպատակը**

Այս մոդուլը նպատակաուղղված է փայտամշակման և երաժշտական գործիքների պատրաստման կազմակերպություններում և արհեստանոցներում, տեխնոլոգիական սարքավորումներով աշխատանքի ժամանակ աշխատանքի անվտանգության վերաբերյալ գիտելիքներ, աշխատանքի պաշտպանության միջոցառումներ իրականացնելու և տեխնիկայի անվտանգության կանոնների պահպանման, այդ թվում և առաջին օգնության կազմակերպման հմտություններ ուսանողի մոտ ձևավորելուն:

**Մոդուլի տևողությունը** 72 ժամ

Տեսական պարապմունք 54 ժամ

Գործնական աշխատանք 18 ժամ

**Մուտքային պահանջները** Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1) Սահմանի աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները,

2) Ներկայացնի տեխնիկական անվտանգության և անվտանգության տեխնիկայի կանոնները, արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները,

3) Իմանա տեխնոլոգիական սարքավորումների հետ աշխատելու ժամանակ հնարավոր վնասվածքների տեսակները, դրանց պատճառները և պաշտպանվելու միջոցները,

4) Իրականացնի առաջին օգնության կազմակերպում և կիրառելի անհրաժեշտ միջոցներ:

**Ուսումնառության արդյունք 1.** Սահմանել աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները

**Կատարման չափանիշներ**

1) ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը, օրենքները և աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը,

2) ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը, մեխանիզմները և դրանց խախտման հետ կապված պատասխանատվությունը,

3) ճիշտ է ներկայացնում տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ, ինչպես նաև դժբախտ դեպքերի ու պատահարների փաստաթղթավորման կարգը:

**Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքի պաշտպանության վերաբերյալ տարբեր փաստաթղթերի, վերահսկողության ձևերի, մեխանիզմների և դրանց խախտման հետ կապված պատասխանատվության, դժբախտ դեպքերի ու պատահարների փաստաթղթավորման կարգի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ նմանեցված աշխատանքային իրավիճակներին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 14 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.** Ներկայացնել տեխնիկական անվտանգության և անվտանգության տեխնիկայի կանոնները, արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները:

**Կատարման չափանիշներ**

- 1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,
- 2) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները,
- 3) ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները,
- 4) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը,
- 5) ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները,
- 6) ճիշտ է ներկայացնում թունաքիմիկաքստների և այլ վտանգավոր նյութերի հետ աշխատանքի կանոնները,
- 7) ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները,

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և թեստերի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր աշխատանքի անվտանգության ապահովման, աշխատանքի ընթացքում մարդու աշխատունակության և առողջության վրա ազդող գործոնների, աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերի և անհրաժեշտ միջոցառումների, աշխատանքի համար անհրաժեշտ նյութերի և դրանց անվնաս օգտագործման վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ նմանեցված աշխատանքային իրավիճակներին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, օժանդակ նյութեր:

### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 14 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.** Իմանալ տեխնոլոգիական սարքավորումների հետ աշխատելու ժամանակ հնարավոր վնասվածքների տեսակները, դրանց պատճառները և պաշտպանվելու միջոցները:

### **Կատարման չափանիշներ**

- 1) ճիշտ է սահմանում վնասվածքները տեխնոլոգիական սարքավորումներից,
- 2) ճիշտ է սահմանում վնասվածքները էլեկտրական հոսանքից,
- 3) ճիշտ է սահմանում օրգանիզմի թունավորումը,
- 4) ճիշտ է սահմանում հնարավոր տարբեր վնասվածքները:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր վնասվածքների (տեխնոլոգիական սարքավորումներից, էլեկտրական հոսանքից և այլն), օրգանիզմի թունավորման վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ նմանեցված աշխատանքային իրավիճակներին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Օգտագործվում են համապատասխան օժանդակ նյութեր, ձեռնարկներ, մասնագիտական գրականություն:

### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 14 ժամ

Գործնական աշխատանք 4 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.** Իրականացնել առաջին օգնության կազմակերպում և կիրառել անհրաժեշտ միջոցներ:

### **Կատարման չափանիշներ**

- 1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնություն ցույց տալու հիմնական կանոններին,
- 2) ճիշտ է ներկայացնում առաջին օգնության գործողությունների քայլերը,
- 3) ճիշտ է կատարում արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,
- 4) ճիշտ է կատարում արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,
- 5) ճիշտ է կատարում այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,
- 6) ճիշտ է կատարում վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կտրվածքների դեպքում,
- 7) ճիշտ է ներկայացնում տարբեր թունավորումների դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր և առաջադրանք այրվածքների, արյան հոսքի դադարեցման, վիրակապման և անշարժացման գործողության, թունավորման դեպքերում առաջին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ նմանեցված աշխատանքային իրավիճակներին: Ուսուցման



ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 12 ժամ

Գործնական աշխատանք 6 ժամ

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»**

**Մոդուլի դասիչը՝** ԱՀ- ՀՀ – 5 – 13 – 003

**Մոդուլի նպատակը՝**Ձարգացնել ուսանողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողություններ:

**Մոդուլի տևողությունը՝** 54 ժամ

Տեսական պարապմունք 18 ժամ

Գործնական աշխատանք 36 ժամ

**Մուտքային պահանջները՝**

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. Ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
2. Կիրառի ուղղակի հաղորդակցման ձևերը
3. Կիրառի անուղղակի հաղորդակցման ձևերը
4. Ձևավորի և զարգացնի միջանձնային հաղորդակցում

**Ուսումնառության արդյունք 1.** Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար:

**Կատարման չափանիշներ**

- 1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունն անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար,
- 2) ճիշտ է ներկայացնում շփման և անձնական հաղորդակցման ձևերն ու դրանց բաղադրիչները,

- 3) ճիշտ է ներկայացնում գործնական հաղորդակցման եղանակներն ու դրանց բաղադրիչները,
- 4) ճիշտ է կողմնորոշվում և իր շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը,
- 5) ճիշտ է կողմնորոշվում և իր անձնական հատկանիշներն օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին հարցեր և հանձնարարվում է սահմանել ուսումնառության անձնական նպատակները, պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռք բերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, սահմանել ուսումնառության տարբեր եղանակները: Տրվում են թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ նմանեցված աշխատանքային իրավիճակներին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն:

### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 3 ժամ

Գործնական աշխատանք 6 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.** Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը:

### **Կատարման չափանիշներ**

- 1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,
- 2) ճիշտ է կողմնորոշվում և բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,
- 3) ճիշտ է կողմնորոշվում և հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնելով հստակ և նպատակային խոսք,
- 4) ճիշտ է կողմնորոշվում և ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ,
- 5) ճիշտ է կողմնորոշվում և մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին հանձնարարվում է բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին: Տրվում են թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև առաջադրվում են տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ՝ բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածքը ստուգելու նպատակով:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ նմանեցված աշխատանքային իրավիճակներին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն:

### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 3 ժամ

Գործնական աշխատանք 6 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.**Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը:

### **Կատարման չափանիշներ**

- 1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,
- 2) ճիշտ է կողմնորոշվում ու կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,
- 3) ճիշտ է կողմնորոշվում և օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,
- 4) ճիշտ է կողմնորոշվում և կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,
- 5) ճիշտ է կողմնորոշվում և վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,
- 6) ճիշտ է կողմնորոշվում և բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,
- 7) ճիշտ է կողմնորոշվում և գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում են խնդիրներ գրավոր խոսքը ձևակերպելու, տեղեկատվությունը նպատակային փոխանցելու, գրություններն ըստ հասցեատիրոջ կազմելու, բանավոր հաղորդակցման նյութը գրավորի, իսկ գրավոր հաղորդակցման նյութը՝ բանավոր հակիրճ նյութի փոխարկելու վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ նմանեցված աշխատանքային իրավիճակներին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն:

### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 4 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.** Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում:

### **Կատարման չափանիշներ**

- 1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հասցեատիրոջ,
- 2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,
- 3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,
- 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,
- 5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,
- 6) կարողանում է պահպանել կամ եզրափակել երկխոսությունը,
- 7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում են անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը մշակել և դասակարգել, առկա տեղեկատվությունն օգտագործել միջանձնային հաղորդակցում իրականացնել, երկխոսություններում, քննարկումներում կարծիք հայտնել, իր տեսակետը հիմնավորել, երկխոսությունը եզրափակել:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

## **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ նմանեցված աշխատանքային իրավիճակներին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն:

### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 4 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

**Ուսումնառության արդյունք 5.** Իսթանբուլ համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար:

### **Կատարման չափանիշներ**

- 1) ներկայացնում է համագործակցությունը խթանող միջոցառումներ (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),
- 2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվություն,
- 3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,
- 4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,
- 5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,
- 6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին առաջադրվում են համագործակցությանը խթանող միջոցառումները ներկայացնել, օգտագործել հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները, ապահովել հետադարձ կապի միջոցառումներ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

## **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ նմանեցված աշխատանքային իրավիճակներին: Ուսուցման

ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 4 ժամ

Գործնական աշխատանք 8 ժամ

Միջին մասնագիտական կրթության «Երաժշտական գործիքների պատրաստում և նորոգում» մասնագիտության «Ազգային նվագարանների պատրաստող և նորոգող» որակավորման հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական մոդուլներ:

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»**

**Մոդուլի դասիչը՝** ԵԳՊՆ – 5 – 13 – 001

**Մոդուլի նպատակը՝** Ուսանողների մոտ ձևավորել իմացություն երաժշտական կարևորագույն տարրերի, լեզվի, արտահայտչական միջոցների վերաբերյալ և զարգացնել ուսանողների երաժշտական լսողությունը:

**Մոդուլի տևողությունը՝** 108 ժամ

Տեսական պարապմունք 54 ժամ

Գործնական աշխատանք 54 ժամ

**Մուտքային պահանջները՝** Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1) Լսելով որոշի, կառուցի, երգի ինտերվալներ, մինչև յոթ նշան ունեցող տոնայնությունների բնորոշ ինտերվալները, գլխավոր աստիճանների եռահնչյունները,

2) Ունենա պատկերացում տոնայնությունների ազգակցության, խրոմատիկ գամմայի, մելիզմների վերաբերյալ,

3) Կարողանա գրել երաժշտական թելադրություն:

**Ուսումնառության արդյունք 1.** Լսելով որոշել, կառուցել, երգել դիատոնիկ և խրոմատիկ հնչյունաշարերի հնչյունները, մաժոր և մինոր ձայնակարգերը, որոշել պարզ և բարդ մետրերը:

**Կատարման չափանիշներ**

1) ճիշտ է կառուցում, երգում, լսելով որոշում դիատոնիկ հնչյունաշարի հնչյունները,

- 2) ճիշտ է մեկնաբանում ավտերացիայի նշանները,
- 3) ճիշտ է կառուցում, երգում, լսելով որոշում խրոմատիկ հնչյունաշարի հնչյունները,
- 4) ճիշտ է կառուցում, երգում, լսելով որոշում մաժոր և մինոր ձայնակարգերը,
- 5) ճիշտ է որոշում պարզ և բարդ մետրերը:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր տեսության վերաբերյալ և հանձնարարվում են կառուցել, երգել և լսելով որոշել դիատոնիկ և խրոմատիկ հնչյունաշարերի հնչյուններ, մաժոր և մինոր ձայնակարգեր, որոշել պարզ և բարդ մետրեր:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, ձայնագրություններ, տեսագրություններ:

### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 9 ժամ

Գործնական աշխատանք 9 ժամ

**Ուսումնառության արդյունք 2.** Լսելով որոշել, կառուցել, երգել ինտերվալները, եռահնչյունները:

### **Կատարման չափանիշներ**

- 1) ճիշտ է կառուցում, երգում, լսելով որոշում ինտերվալները,
- 2) ճիշտ է կառուցում, երգում, լսելով որոշում եռահնչյունները,
- 3) ճիշտ է որոշում ձայնակարգի առանձին աստիճանները:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր տեսության վերաբերյալ և հանձնարարվում են կառուցել, երգել, լսելով որոշել ձայնակարգի առանձին աստիճաններ, ինտերվալներ, եռահնչյուններ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, ձայնագրություններ, տեսագրություններ:

### **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 9 ժամ

Գործնական աշխատանք 9 ժամ

**Ուսումնառության արդյունք 3.** Լսելով որոշել, կառուցել, երգել ակորդները, ձայնակարգի գլխավոր աստիճանների եռահնչյունները, բնորոշ ինտերվալները, գրել երաժշտական թելադրություն:

### **Կատարման չափանիշներ**

- 1) ճիշտ է կառուցում, երգում, լսելով որոշում ակորդները,
- 2) ճիշտ է կառուցում, երգում, լսելով որոշում ձայնակարգի գլխավոր աստիճանների եռահնչյունները,
- 3) ճիշտ է կառուցում, երգում, լսելով որոշում ձայնակարգի բնորոշ ինտերվալները,
- 4) ճիշտ է գրում երաժշտական թելադրություն:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր և հանձնարարվում են կառուցել, երգել, լսելով որոշել ակորդներ, ձայնակարգի բնորոշ ինտերվալները, ձայնակարգի գլխավոր աստիճանների եռահնչյունները, գրել երաժշտական թելադրություն:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, ձայնագրություններ, տեսագրություններ:



## **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 9 ժամ

Գործնական աշխատանք 9 ժամ

**Ուսումնառության արդյունք 4.** Լսելով որոշել, կառուցել, երգել մինչևերեքնշանունեցող տոնայնությունների գլխավոր աստիճանների եռահնչյունները, մեկնաբանել երաժշտական տերմինների նշանակությունը, որոշել ձայնակարգի ակորդները, գրել երաժշտական թելադրություն:

### **Կատարման չափանիշներ**

- 1) ճիշտ է կառուցում, երգում, որոշում լսելով մինչև երեք նշան ունեցող տոնայնությունների գլխավոր աստիճանների եռահնչյունները
- 2) ճիշտ է կառուցում, երգում, լսելով որոշում մինչև երեք նշան ունեցող տոնայնությունների բնորոշ ինտերվալները,
- 3) ճիշտ է մեկնաբանում երաժշտական տերմինների նշանակությունը,
- 4) ճիշտ է որոշում ձայնակարգի ակորդները,
- 5) ճիշտ է գրում երաժշտական թելադրություն:

### **Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր տեսության վերաբերյալ և հանձնարարվում են կառուցել, երգել, լսելով որոշել մինչև երեք նշան ունեցող տոնայնությունների բնորոշ ինտերվալները, գլխավոր աստիճանների եռահնչյունները, ձայնակարգի ակորդները, մեկնաբանել երաժշտական տերմինների նշանակությունը, գրել երաժշտական թելադրություն:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

### **Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, ձայնագրություններ, տեսագրություններ:

## **Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 9 ժամ

Գործնական աշխատանք 9 ժամ

**Ուսումնառության արդյունք 5.** Լսելով որոշել, կառուցել, երգել մինչև յոթ նշան ունեցող տոնայնությունների գլխավոր աստիճանների եռահնչյունները, ունենալ պատկերացում տոնայնությունների ազգակցության, խրոմատիկ գամմայի, մելիզմների վերաբերյալ:

**Կատարման չափանիշներ**

- 1) ճիշտ է կառուցում, երգում, լսելով որոշում մինչև յոթ նշան ունեցող տոնայնությունների գլխավոր աստիճանների եռահնչյունները,
- 2) ճիշտ է կառուցում, երգում, լսելով որոշում մինչև յոթ նշան ունեցող տոնայնությունների բնորոշ ինտերվալները,
- 3) ճիշտ է ներկայացնում տոնայնությունների ազգակցությունը,
- 4) ճիշտ է ներկայացնում խրոմատիկ գամմայի կառուցվածքը,
- 5) ճիշտ է մեկնաբանում մելիզմների նշանակությունը:

**Գնահատման միջոցը**

Արդյունքի գնահատումն իրականացվելու է հարց ու պատասխանի, թեստերի և գործնական առաջադրանքների միջոցով: Ուսանողին կտրվեն հարցեր տեսության վերաբերյալ և հանձնարարվում են կառուցել, երգել, լսելով որոշել մինչև յոթ նշան ունեցող տոնայնությունների բնորոշ ինտերվալները, գլխավոր աստիճանների եռահնչյունները, ներկայացնել տոնայնությունների ազգակցությունը, խրոմատիկ գամմայի կառուցվածքը, մեկնաբանել մելիզմների նշանակությունը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը հիմնականում ճիշտ է պատասխանում հարցերին և ամբողջությամբ ճիշտ է կատարում գործնական հանձնարարությունները:

**Մեթոդաբանություն և ռեսուրսներ**

Արդյունքի ուսումնասիրումը կատարվում է դասավանդման, ուսումնառության նյութերի և գործնական պարապմունքների միջոցով, ինտերակտիվ մեթոդներով: Օգտագործվում են համապատասխան ձեռնարկներ, մասնագիտական գրականություն, ձայնագրություններ, տեսագրություններ:

**Ուսուցման երաշխավորված ժամաքանակ**

Տեսական պարապմունք 18 ժամ

Գործնական աշխատանք 18 ժամ

**ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ»**

**Մոդուլի դասիչը՝** ԵԳՊՆ - 5 – 13 - 002

**Մոդուլի նպատակը՝** Ուսանողի մոտ ձևավորել իմացություն արտասահմանյան երաժշտության պատմության, երաժշտական գործիքների ծագման,

զարգացման և կառուցվածքի վերաբերյալ:

**Մոդուլի տևողությունը՝** 90 ժամ

Տեսական պարապմունք 54 ժամ

Գործնական աշխատանք 36 ժամ

**Մուտքային պահանջները՝** Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ անհրաժեշտ չեն:

**Ուսումնառության արդյունքները՝**

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

